

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը Ուսանողների միջազգային օրվա առիթով

Սիրելի՛ ուսանողներ,

Ձերմոտեն շնորհավորում եմ ձեզ ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ: Այս օրը հանդիսանում է համախմբման և միասնականության լավագույն ավանդույթի խորհրդանիշ ոչ միայն ձեզ, այլև ողջ երիտասարդության համար:

Յուրաքանչյուր պետության զարգացման ու առաջընթացի գործում ձեզ մեծագույն դերակատարում է վերապահված և համոզված եմ՝ դուք այդ առաքելությունը պատվով եք տանելու: Ձեր գիտելիքներն ու ավյունը հենքն են մեր զարգացող երկրի ու հզոր պետության, բարեկեցիկ կյանքի ու առողջ հասարակության: Դուք եք մեր հասարակության շարժիչ ուժը, և թե ինչ պետություն ենք ունենալու մենք վաղը, առավելապես կախված է հենց ձեզնից՝ այսօրվա ուսանողներից ու երիտասարդներից:

Այնպես որ, սիրելի՛ ուսանողներ, ձեր գիտելիքների ու նպատակասլացության շնորհիվ նվաճեք գիտության բարձունքները, ձեր ներուժն ու ունակությունները անմնացորդ ծառայեցրեք մեր երկրի ու մեր մարզի բարգավաճման ու լուսավոր ապագայի կերտման վեհ գործին:

Մեկ անգամ ևս շնորհավորելով մարզի ու հանրապետության բոլոր ուսումնական հաստատություններում սովորող սյունեցի ուսանողներին, մաղթում եմ նվիրական երազանքների և իղձերի իրականացում: Կյանքում եղե՛ք համարձակ ու նախաձեռնող, հաջողակ ու լավատես:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Ս. Խաչատրյան

17.11.2015թ.